

ՀՐԱՀԱՆԳ

ԿԱՆ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ԵՎ
ՅՐԵՐԻ ՊԱՐԶ ԲԱՐԵԼԱՎՄԱ
Ս Ա Ս Ի Ն


ИНСТРУКЦИЯ
О простейшем улучшении
сенокосов и пастбищ
(На армянском языке)

ՎՖ 5117 պատվեր 169, տիրաժ 1200
Ստորագրված է ապագրության 28/V—1941 թ.
ԱրմՖԱՆ-ի սպարակ, Երևան, Լենինի 67

Հաստատում եմ՝ ՀՈՂՃՈՂ-
ԿՈՄԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ԵՎՈՅԱՆ
4/V 1941 թ.

A Բնական խոտհարքների և արոտավայ-
րերի պարզ բարելավման նպատակն է
բարձրացնել բնական մարդագետինների
բերքատվությունը՝ նրանց վրա երեսանց
աղղելու միջոցով:

Քարերի հավաքումը, հողակույտերի վե-
րացումը, թփուտների, մոլախոտերի և թու-
նավոր բույսերի ոչնչացումը հիմնականում
ավելացնում են բնական մարդագետիննե-
րի օգտագործման մակերեսը, պայմաններ
են ստեղծում խոտհարքներում մեքենանե-
րով աշխատանք կատարելու համար. դրանք
նախապատրաստական ձեռնարկումներ են՝
հետագայում ավելի արդյունավետ միջո-
ցառութերի դիմելու համար։ Այլ կերպ
ասած՝ այդ ձեռնարկումները մասամբ մի-



այն կարող են ազդել մարգագետնի բերքատվության բարձրացման վրա։ Բնական մարգագետինների բերքատվության բարձրացման վրա երեսանց ազդելու հիմնական ձեռնարկումներն են՝ պարարտացում, ոռոգում, արոտների հանգիստ և արոտների հերթական օգտագործում։ Այդպիսի մի ձեռնարկում է նաև մարգագետնային խոտաբույսերի ենթացանքը, որի հետևանքով լավանում է խոտակագմը և զգալի չափով բարձրանում է բերքատվությունը։

Վերը հիշված ձեռնարկումներից ցանկալի արդյունք ստանալու համար հարկավոր է նախամտածված աշխատանք տանել։

Երեսանց բարելավման համար նախ պետք է ամբողջ խոտհարքային և արոտային տարածությունից առանձնացնել այնպիսի մասեր, որոնց բերքատվությունն զգալի չափով ընկած է, ապա սահմանել կատարվելիք ձեռնարկումների ժամկետներ և հաջորդականություն։

Առաջին հերթին պետք է հավաքել մարգագետնի քարերը։ Քարերը հավաքե-

լուն պետք է բավական լուրջ ուշադրություն դարձնել, որովհետև այդ գործում սխալներ կատարելու դեպքում մեծ վնաս կարող է հասնել ոչ միայն տվյալ տնտեսությանը, այլև ամբողջ երկրին:

Մարգագետնի այն քարերը, որոնք իրենց մի մասով հողի մեջ չեն մտել, ուղղակի պետք է հավաքել և հեռացնել, իսկ այն քարերը, որոնք այս կամ այն չափով հողի մեջ են դտնվում, պետք է հեռացնել այսպես. նախ անհրաժեշտ է նկատի ունենալ մարգագետնի թեքությունը և ապա միայն սկսել այդպիսի քարերը հավաքելու և հեռացնելու գործը: Եթե մարգագետինը թեք չէ, բոլոր քարերը, ինչ մեծության էլ լինեն նրանք, անպայման պետք է հավաքել. Եթե հնարավոր չէ մեծ քարերը տեղից շարժել, պետք է ջարդել և ապա հեռացնել: Թեք մարգագետիններում հողի մեջ նստած քարերի հեռացումը բավական պատասխանատու գործ է: Եթե երկյուղ չկա, որ հողի մեջ նստած քարը հանելուց հետո, մթնոլորտային տեղումների հետևանքով հողի սա-

հում կամ ողողում տեղի կունենա, այն
դեպքում միայն պետք է հեռացնել այդ
քարերը: Թե հարթավայրում և թե հատ-
կապես թեք լանջերում քարերը հանելուց
առաջացած փոսերը պետք է լավ հող լցնել,
ամուր տոփանել (տրորել), ապա մարգա-
գետիններում բուսնող լավագույն խոտա-
բույսերի սերմեր հավաքել, ցանել այդ նոր
լցրած տեղերը, որպեսզի նրանք ճմակալ-
վեն և ամրանան: Ավելի թեք մարգագե-
տիններում քարերը պետք է հավաքել և
հեռացնել շրջանի գյուղատնտեսի ցուցում-
ներով և նրա անմիջական հսկողությամբ:
Խստ թեք մարգագետիններում հողի մեջ
նստած քարերը չի թույլատրվում հանել:

Մոլախոտերը և թունավոր բույսերը
պետք է ոչնչացնել ամենուրեք, անկախ
նրանից, թե ինչպիսի դիրք ունի մարգա-
գետինը: Այդ բույսերը պետք է ոչնչացնել
արմատահան անելու միջոցով: Կարելի է
դրանց դեմ պայքարել նաև հնձելու միջո-
ցով՝ մինչև նրանց ծաղկելը, բայց որով-
հետեւ մի շարք մոլախոտեր և թունավոր

բույսեր մեծ մասամբ բազմանում են արա-
մատային սիստեմի միջոցով, ուստի այդ-
պիսիները պետք է ոչնչացնել արմատահան
անելով։ Արմատահան արված բույսերի
տեղը հարկավոր է տրորել, որպեսզի հողը
ամրանա և սահում տեղի չունենա։

Մարգագետիններում եղած հողակույտե-
րը վերացնելու գեղքում պետք է նկատի
ունենալ, թե ինչպիսի ծագում ունի այս կամ
այն հողակույտը և ըստ այնմ վերացնել։

Հողակույտերը կարող են առաջանալ
գետնի տակից մկների և մրջյունների հա-
նած հողի ճմակալման, մարգագետինների
քարերը ճմերով պատվելու, խոնավ եղա-
նակներին մարգագետնում անասուններ
արածացնելու հետևանքով։

Եթե հողակույտերն առաջացել են մըկ-
ների և մրջյունների հավաքած հողից և
դեռ չեն ճմակալվել ու թվով էլ շատ չեն,
պետք է բահերով կամ ձեռքի հողուրագնե-
րով հավասարաչափ փռել մարգագետնի
երեսին, իսկ եթե այդպիսի հողակույտերը
շատ են, պետք է զիգզագ փոցիներով եր-

կու երես փոցիսել։ Այն դեպքում, երբ հռա-
դակույտը ճմակարվել և ամրացել է, պետք է
քահով հողից հանել այն, առանձնացնել,
ապա նրա բոնած տեղից հանել այնքան
հող, որքան ճիմի ծավալն է և ճիմը դնել
առաջացած փոսի մեջ ու լավ տոփանել։

Քարերի ճմալատման հետևանքով առա-
ջացած հողակույտերը հեռացնելու դեպքում
պետք է վարվել հետևյալ կերպ։

Եթե մարդագետինը հարթավայրում է,
պետք է ճիմը քանդել, քարը հանել և
առաջացած փոսը հողով լցնել, ճիմի կտոր-
ները շարել երեսին և տոփանել։ Թեք մար-
դագետիններում հողակույտերը վերացնելու
գործը մեծ զգուշություն է պահանջում։
Որպեսզի հողի սահում կամ ողողում չառա-
ջանա, պետք է փոքր ճմերը մի կողմից
(ավելի լավ է բարձունքի կողմից) ճեղքել
և քարը հանել՝ առանց ճիմը մշասելու։ Եթե
քարը հանելուց առաջացած փոսը մեծ է,
այն դեպքում հող պիտի լցնել, ապա ճիմը
տրորելով մտցնել փոսի մեջ այսպես, որ-
պեսզի այն հավասարվի մարդագետնի մա-

կերեսին: Խոնավ եղանակներին անասուններն արածացնելու հետևանքով առաջացած ճմակալված կույտը նախ պետք է հիմքից կտրել, ապա նրա բոնած տեղից հողը հանել և հավասարաչափ շաղ տալ մարդագետնի մակերեսին, իսկ ճիմը, առանց քայքայելու, նատեցնել իր տեղը:

Թփուտների վերացման գործին պետք է վերաբերվել շատ զգուշ:

Նախ պետք է որոշել այն թփուտները, որոնք մնաս են հասցնում անասնապահությանը. այդպիսի թփուտներ են՝ վայրի մասրենիները, փշոտ մանր մացառները, աստրագալները (գաղը) և այլ: Այդպիսի թփուտները և փշատերեկ բույսերը խոտանառներից և արոտավայրերից պետք է վերացնել, սակայն ոչ ամենուրեք: Հարթավայրերում և աննշան թեքությունների վրա գտնվող մարգագետիններում այդպիսի թփուտներն ամբողջովին պետք է հեռացնել, առանց որևէ կասկածի, թե դրանից կարող է գործը վտանգվել:

Թեք լանջերում, եթե թփուտը առանձին

դեր չի կատարում հողաշերտը սահումից
պաշտպանելու տեսակետից, այսինքն գըտ-
նըվում է լանջի փոս ընկած տեղերում,
հարկավոր է այն արմատահան անել, ապա
հողը լավ տոփանել: Այն դեպքերում, եթե
թփուտը թեև հողաշերտը պաշտպանում է
սահումից, բայց արգելք է հանդիսանում
մեքենայացմանը, պետք է այդպիսի թփու-
տը նախ արմատահան անել, ապա հող
լցնել, լավ տոփանել և մարգագետնային
խոտաբույսերի սերմեր ցանել՝ այդտեղ
ճմակալում առաջացնելու նպատակով: Շատ
թեք լանջերում թփուտներն արմատահան
պիտի անել շրջանային դյուղատնտեսի հա-
մաձայնությամբ, նրա ցուցումներով և ան-
միջական հսկողությամբ:

Վերը հիշված միջոցառումներից հետո
անհրաժեշտ է նույն հողամասում առաջին
հերթին կատարել պարարտացում: Մարգա-
գետինը կարելի է պարարտացնել տեղական
և հանքային պարարտանյութերով: Տեղական
պարարտանյութերով պարարտացումը կա-
տարել հետևյալ կերպ.

Գոմաղբով պարարտացնել վաղ գարնանը,

մեկ հեկտարին 5 տարին մեկ անգամ տալ
40 տոննա գոմաղբ:

Մոխրով պարարտացնել նույնպես վաղ
դարնանը, մեկ հեկտարին տալ 500-ից
մինչև 700 կիլոգրամ մոխիր:

Որպես պարարտանյութ—գործ է ածվում
նաև կոյաջուրը (գոմաղբի հյութը), որը
բավական լավ է աղղում մարդագետիննե-
րի բերքատվության բարձրացման վրա:
Մեկ հեկտարին ոլետք է տալ 7—15 տոննա
կոյաջուր, և, նայած թանձրությանը, մեկ
դույլ այդպիսի պարարտանյութին ավելաց-
նել մեկ կամ երկու դույլ ջուր: Մարդագե-
տինը կոյաջրով պարարտացնել 3 տարին
մեկ անգամ, պարարտացումը կատարել վաղ
դարնանը, ամպամած եղանակներին, իսկ
արոտավայրերը պարարտացնել աշնանը,
որովհետեւ կոյաջրի անախորժ հոտը թույլ
չի տալիս, որ անասունները լավ արածեն:

Կոյաջուր (գոմաղբի հյութ) կարելի է
ստանալ երկու ձևով՝ անասնագոմերում
առաջացած հեղուկ գոմաղբը հավաքելու
միջոցով կամ ոռողման ցանցի հիմնական

առվի սառրաբաժանումների սկզբին փոսեր պատրաստել, այդտեղ գոմաղը լցնել, ապա ջուր բաց թողնել վրան և եղաններով շաքունակ գոմաղը խառնել ջրում լուծելու համար և առվակների միջոցով հավասարաշափ բաշխել մարգաղետնի վրա:

Մարգաղետինները կարելի է պարարտացնել նաև թոչնաղբով (ծերտ), կոմպոստով (խառնաղբով) և «գիշերային ոսկով»—զուղարանների աղբով:

Բացի տեղական պարարտանյութերից կարելի է օգտագործել նաև հանքային պարարտանյութերը:

Ազոտական պարարտանյութերից սուլֆատ-ամոնիում տալ մեկ հեկտարին 2,5-ից մինչև 3 ցենտներ կամ մաքուր ազոտ՝ 45—60 կիլոգրամ. ազոտական պարարտանյութով մարգաղետինը պետք է պարարտացնել յուրաքանչյուր տարի, մնուցման եղանակով, 2—3 նվազում՝ քաղից առաջ և քաղից հետո, արոտներում՝ առաջին արոտից հետո և հաջորդ արոտներից հետո:

Մարգաղետիններում հաջողությամբ կա-

ըելի է օգտագործել ամոնիումի սելիտրան,
որը պարունակում է 35 տոկոս ազոտ:

Ցիանամիդ-կալցիում՝ 20 տոկոս—ազոտի
պարունակությամբ, սակայն այս պարար-
տանյութը բույսերին այրվածքներ է պատ-
ճառում, դրա համար էլ այն պետք է հողի
մեջ մտցնել վաղ գարնանը, անձրևային
եղանակներին, մինչև բույսերի արթնա-
նալը:

Ֆոսֆորաթթվուտային պարարտանյու-
թերից գործադրել սուպերֆոսֆատ, մեկ
հեկտարին 3 ցենտներ, 20 տոկոս—ֆոսֆորա-
կան թթվի պարունակության դեպքում, երեք
տարին մեկ անգամ, վաղ գարնանը, անձրե-
վային եղանակներին:

Կալիական պարարտանյութերից ամե-
նից լավը կալիական աղն է. մեկ հեկտա-
րին պետք է տալ 1,5 ցենտներ կամ 60
կիլոգրամ մաքուր կալիում:

Վերը թված հանքային պարարտանյու-
թերն առանձին գործածելու դեպքում այն
արդյունքը չեն տալիս, ինչ կարելի է ստա-
նալ նրանց համատեղ գործածելուց, ահա

թե ի՞նչու հանձնարարվում է այդպիսի պարարտանյութերը հողի մեջ մտցնել միաժամանակ:

Թե օրգանական և թե քիմիական պարարտանյութերը հողի մեջ մտցնելու համար պետք է զիգզագ փոցխերով կամ փշոտ ճյուղերից պատրաստված ցաքաններով հողը 2-3 հետք փոցխել:

Մարգագետինների բերքատվությունը բաձրացնելու համար մեծ նշանակություն ունի ոռոգումը: Այն մարգագետիններում, որտեղ հնարավոր է ոռոգում անցկացնել, պետք է կիրառել հետվյալ ձեռնարկումները: Կառուցել ջրամբարներ (գյոլեր) կամ բնական լճակներից առուներ հանել զեղի մարգագետինը: Առուները պետք է այնպես դասավորել, որ թեք հողերում ուղիղ գծով վերից զեղի ցած չանցնեն և հողը չողողին: Առուները պետք է հանել լանջերի վրա վերից ցած, թեք դասավորությամբ և իրար գուգահեռ, իսկ ոռոգումը կատարել. ջրերի դանդաղ հոսանքով:

Մյուս ձեռնարկումներից մեկն էլ արոտ-

ներին ժամանակավորապես հանգիստ տալն
է: Ցածը բերքատվություն ունեցող արո-
տավայրերում լավ արդյունք է ստացվում,
երբ այդտեղ 1—2 տարի անասուններ չեն
արածեցնում: Լավ արդյունք է ստացվում
նաև այն դեպքում, երբ արոտներում անա-
սուններն արածեցնում են հերթականու-
թյամբ. այդ պետք է անել հետևյալ կերպ.
ամբողջ արոտավայրը բաժանել 8—12 հա-
վասար մասերի և կազմակերպել անասուն-
ների շրջանառու արածեցում: Բացի դրա-
նից՝ արոտներում և մարգագետիններում
անասունների կացատեղը (կանգնեցնելու
վայրը՝ հանգստի համար) պետք է փոփո-
խել, որպեսզի կացատեղերում գոյացած
գոմաղը և միզաջրերը մարգագետինների
մակերեսին տարածվեն համաչափ:

Բացի վերը նշված միջոցառումներից՝
հանձնարարվում է նաև խոտհարքներում
ու արոտավայրերում կատարել բազմամյա
մարգագետնային խոտարույսերի սերմերով
ենթացանք, առանց հողը վարելու: Ցանքը
կատարելուց առաջ պետք է հողը գոմաղը

A I
3758

պարարտացնել և զիգզագ փոց
երես փոցխել: Նույնպես պետք
գետինը փոցխել մեկից երկու անգամ սեր-
մերը հողի մեջ մտցնելու համար:

Մարդագետնային խոտաբույսերի են-
թացանքի գործն ապահովելու համար պետք
է առաջին հերթին զբաղվել այդ խոտա-
բույսերի սերմարուծությամբ, բացի զբա-
նից՝ կարելի է արժեքավոր վայրի խոտա-
բույսերի սերմերը հավաքել և ցանել մարդա-
գետիններում:

Վերը նշված բոլոր ձեռնարկումները կամ
դրանցից մի քանիսը միասին տվյալ մար-
դագետնում կիրառելու դեպքում հնարավոր
կլինի բերքը բարձրացնել 2—3 անգամ:

Կազմեց Հողժողկոմատի Անասնա-
պահական Վարչության գլխավոր
գյուղատնտես Լ. Վ.ԱնեզՅԱՆԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038336